

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Մաքսային միության 2009 թվականի դեկտեմբերի 11-ի «Բույսերի կարանտինի մասին» Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

Մաքսային միության 2009 թվականի դեկտեմբերի 11-ի «Բույսերի կարանտինի մասին» Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 10-րդ հոդվածին համապատասխան, համաձայնեցին հետեյալի մասին.

#### Հոդված 1

Համաձայնագրի 2-րդ հոդվածում՝

ա) առաջին պարբերության մեջ «միության եւ մաքսային» բառերը փոխարինել «միության՝ ներմուծման դեպքում եւ մաքսային» բառերով,

բ) լրացնել 4-րդ պարբերությունը հետեյալ բովանդակությամբ. «Կարանտինի մեջ գտնվող արտադրանքը Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու դեպքում կարանտինային բուսասանիտարական ստուգումն (հսկողությունը) իրականացվում է Կողմեր հանդիսացող պետությունների՝ բույսերի կարանտինի ոլորտում միջազգային պարտավորությունների եւ Կողմեր հանդիսացող պետությունների օրենսդրությանը համապատասխան»:

#### Հոդված 2

Համաձայնագրի 4-րդ հոդվածում՝

ա) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող՝ կարանտինի մեջ գտնվող արտադրանքը պետք է համապատասխանի Կողմ հանդիսացող այն պետության բուսասանիտարական պահանջներին, որի տարածքում տեղակայված է կարանտինի մեջ գտնվող արտադրանքի նշանակետը:

Կողմերն ապահովում են կարանտինի մեջ գտնվող՝ ներմուծվող արտադրանքի նկատմամբ ներկայացվող բուսասանիտարական պահանջների վերաբերյալ պաշտոնական տեղեկությունների տեղադրումը Կողմերի լիազոր մարմինների պաշտոնական կայքերում (համացանցային ռեսուրսներում), ինչպես նաև Եվրասիական տնտեսական համայնքի տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցների ոլորտի Տեղեկատվական համակարգում եւ Մաքսային միության արտաքին ու փոխադարձ առևտրի ինտեգրացված տեղեկատվական համակարգում:

Կարանտինի մեջ գտնվող՝ բուսասանիտարական բարձր ռիսկայնության արտադրանքի խմբում՝ Կարանտինի մեջ գտնվող արտադրանքի ցանկին համապատասխան ներառված՝ կարանտինի մեջ գտնվող արտադրանքի յուրաքանչյուր խմբաքանակ ներմուծվում է Մաքսային միության մաքսային տարածք արտահանման կամ վերաարտահանման բուսասանիտարական կից հավաստագրով, որը տրամադրվում է Կողմ հանդիսացող՝ արտահանող (վերաարտահանող) պետության իրավասու մարմնի կողմից՝ համաձայն Կոնվենցիայով սահմանված ձեւաթղթի:»,

բ) 3-րդ կետում «կարանտինի մեջ գտնվող արտադրանքի խմբաքանակ» բառերից հետո լրացնել «Կարանտինի մեջ գտնվող՝ բուսասանիտարական բարձր ռիսկայնություն ունեցող արտադրանքի խմբում՝ Կարանտինի մեջ գտնվող արտադրանքի ցանկին համապատասխան ներառված,»:

### **Հոդված 3**

5-րդ հոդվածից հանել «լիազոր մարմինների» բառերը:

#### **Հոդված 4**

Կողմերի միջև սույն Արձանագրության մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

Եթե վեճը չի կարգավորվում խորհրդակցությունների ու բանակցությունների անցկացման վերաբերյալ վեճի Կողմերից մեկի կողմից մյուս Կողմերին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքը ներկայացնելու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում, ապա վեճի Կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

#### **Հոդված 5**

Սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է «Մաքսային միության իրավապայմանագրային բազայի ձեւավորմանն ուղղված՝ միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6–ի արձանագրությամբ:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2010 թվականի մայիսի 21–ին, մեկ բնօրինակից, ռուսերենով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը, որպես սույն Արձանագրության ավանդապահ, յուրաքանչյուր Կողմի կտրամադրի դրա հաստատված պատճենը:

Բելառուսի  
Հանրապետության  
Կառավարության կողմից

Ղազախստանի  
Հանրապետության  
Կառավարության կողմից

Ռուսաստանի  
Դաշնության  
Կառավարության կողմից